ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԷՍԷՌՆԵՐԻ ԴԵՄ 1917 Թ. ԵՏՀՈՒԼԻՍՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՍԱՍՈՒՆԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Էսէռական առաջին կազմակերպություններն Անդրկովկասում ստեղծվեցին 1903—1905 թթ., երկրամասի համեմատաբար խոշոր քաղաքներում՝ Բաքվում, Թիֆլիսում, Երևանում և այլն։ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին էսէռների դիրքերն Անդրկովկասում շատ թույլ էին։

Նրանց գործունեության մասշտաբների մասին բնորոշ է Անդրկովկասի հեղափոխական շարժման ակտիվ գործիչներից մեկի՝ Ֆ. Մախարաձեի, կարծիքը։ Նա գրել է. «Էսէռները գործում էին քաղաքներում, ինչպես, օրինակ, Թիֆլիսում, Բաքվում։ Այդ խմբակները կազմված էին բացառապես մտավորականներից, որոնք ոչ մի կապ չունեին ոչ միայն գյուղացիության, այլև քաղաքի բանվորների հետ»[1]։

Երևանում էսէռական կազմակերպություն սկսել է գործել 1905 թ.։ Այդ մասին հիշատակվում է 1917 թ. ապրիլին Թիֆլիսում կայացած սոցիալիստ-հեղափոխականների Անդրկովկասյան շրջանային համագումարում Երևանի կազմակերպության ներկայացուցիչ Տեր-Հակոբյանի ելույթում։ Նրանում ասված է. «Էսէռական կազմակերպության գործունեության սկիզբը վերաբերում է 1905 թվականին, երբ «Դաշնակցություն» կուսակցությունից դժգոհ հեղափոխական-սոցիալիստական էլեմենտները հեռացան այդ կուսակցությունից և մի քանի էսէռ ուսանողների հետ միասին հիմնեցին իրենց կազմակերպությունը։ Մինչև 1907 թվականը աշխատանքը տարվում էր ոչ լայն մասշտաբներով։ Իսկ 1908 թվականից մինչև հեղաշրջումը (փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունը—Ս. Մ.) այն բոլորովին դադարեցավ»[2]։

1905—1907 թթ. էսէռների դիրքերը բավական ուժեղանում են Քութաիսում և Բաքվում։ 1908 թ. սկսում է լույս տեսնել Քութաիսի էսէռական կազմակերպության օրգան «Շրոմա» («Աշխատանք») վրացերեն թերթը։ Եթե Բաքվում էսէռական կազմակերպությունը մինչև 1905 թ. շատ թույլ էր և տեղի սոցիալ-դեմոկրատներից մեկի դիպուկ արտահայտությամբ «կարող էր տեղավորվել մեկ բազմոցի վրա»[3], ապա հետագայում էսէռները բավական ամրապնդեցին իրենց դիրքերը՝ կուսակցական բջիջներ ստեղծելով քաղաքի մի շարք արդյունաբերական շրջաններում։ Ստեղծվեցին նաև ադրբեջանական էսէռական «Իթթիֆակ» («Միություն») և «Էշեմս» («Արև») կազմակերպությունները[4]։ 1907 թ. հունիսին Բաքվում ձևավորվեց նաև «սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայ կազմակերպությունը»՝ ռուսական սոցիալիստ-հեղափոխականների հայկական մասնաճյուղը[5]։ «Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայ կազմակերպության» ստեղծման նախաձեռնությունն իրենց ձեռքն էին վերցրել այսպես կոչված «անշատականները»

---

1 Ф. Махарадзе, Очерки революционного движения в Закавказье, Тбилиси, 1927, с. 317.

2 «Знамя труда», Тифлис, 11. IV. 1917.

3 «Очерки истории коммунистических организаций Закавказья», ч. I, Тбилиси, 1967, с. 178.

4 Նույն տեղում։

5 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4043, ց. 1, գ. 1, թ. 49։

կամ «երիտասարդ դաշնակցականները», որոնք, Լ. Աթաբեկյանի (Ռիխարդ) դլխավորությամբ, հեռացել էին դաշնակցությունից։ Անդրադառնալով դաշնակցականների և էսէռների փոխհարաբերության հարցին, Վ. Ի. Լենինը, հիմնականում ի նկատի ունենալով նրանց ծրագրերը, գրել է, որ դաշնակցությունը «շատ մոտիկ է էսէռներին, իսկ «երիտասարդները» նույնիսկ մտնում են ս.—հ. (սոցիալիստ-հեղափոխականների—Ս. Մ.) կուսակցության մեջ»[6]։

Շուտով էսէռների «հայ կազմակերպության» մասնաճյուղեր են ստեղծվում նաև Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Կարսում և այլ քաղաքներում։ 1908 թ. մարտից Բաքվում սկսում է լույս տեսնել էսէռների «հայ կազմակերպության» մամուլի անդրանիկ օրգան «Անիվ» շաբաթաթերթը, որի խմբագիրը Գ. Բաղաղ-Աղաջանյանն էր։ Թերթը հայտարարում էր, որ իրենց կազմակերպությունը ոչ մի կապ չունի դաշնակցություն կուսակցության հետ[7]։

Ռեակցիայի և իմպերիալիստական պատերազմի տարիներին էսէռների դիրքերն Անդրկովկասում բավական թուլացան։ Նրանց կազմակերպությունների մի մասը չդիմացավ և ջախջախվեց։ Էսէռական որոշ կազմակերպություններ պահպանվեցին Ելիզավետպոլում, Բաթումում, Թիֆլիսում, Բաքվում և այլ քաղաքներում։ Անդրկովկասում սոցիալիստ հեղափոխականների կուսակցությունն իր երկրորդ ծնունդն ապրեց 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ նրա պատմության մեջ սկսվեց, ինչպես իրենք՝ էսէռներն էին կարծում, «փառավոր» մի շրջան[8]։

Քաղաքական կուսակցությունների իսկական դեմքը, նշել է Վ. Ի. Լենինը, «ամենից ավելի պարզորոշ երևան է գալիս ամբողջ երկիրը ցնցող խոր ճգնաժամերի ժամանակ։ ...Լուրջ պայքարը դեն է նետում ամեն տեսակ ֆրազները, այն ամենը, ինչ մանր է և խորթ»[9]։ Պետրոգրադի 1917 թ. հուլիսյան իրադարձությունները լիովին համապատասխանում են Վ. Ի. Լենինի վերը նշված բնութագրմանը։ Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո ժամանակավոր կառավարության հուլիսյան ճգնաժամը և դրան հաջորդած իրադարձությունները բեկումնային նշանակություն ունեցան թե՛ հեղափոխության հետագա ճակատագրի, թե՛ բազմաթիվ կուսակցությունների, այդ թվում էսէռների, իսկական էությունն ըմբռնելու համար։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ էսէռները, հավատարիմ իրենց ավանդական երկդիմի քաղաքականությանը, դավաճանելով իրենց իսկ «հեղափոխական ֆրազներին» և հեղափոխությանը, «մատնեցին բոլշևիկներին և լռելյայն հաստատեցին նրանց թերթերի ավերումը, չհամարձակվելով նույնիսկ ուղիղ և բացահայտ կերպով ասել ժողովրդին այն մասին, որ դա իրենք են անում և ինչու են այդ անում։ ...Նրանք դարձան ամենադատարկ շաղակրատներ, որոնք օգնում էին ռեակցիային «զբաղեցնել» ժողովրդի ուշադրությունը, մինչև ռեակցիան կավարտի Սովետները ցրելու իր վերջին նախապատրաստությունները»[10]։

Չնայած այն հանգամանքին, որ Անդրկովկասի պաշտոնական և բուրժուազգայնական մամուլն ամեն կերպ ցանկանում էր ժողովրդից թաքցնել օբյեկտիվ ճշմարտությունը, այնուամենայնիվ, հուլիսյան իրադարձությունների լուրը ցնցող տպավորություն գործեց ամբողջ երկրամասում։ Տեղական իշխանությունները, էսէռամենշևիկյան սովետների ամենաեռանդուն աջակցությամբ, ձեռք առան բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի կանխեն հեղափոխականորեն տրամադրված ժողովրդական մասսաների և կովկասյան բանակի զինվորների ելույթները։

Հուլիսի 7-ին Թիֆլիսում կայացավ Կովկասյան բանակի երկրային սովետի և բանվորների, զինվորների անդրկովկասյան սովետների գործադիր

6 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 16, էջ 471։

7 «Անիվ», 8. VI. 1908։

8 Ասքանազ Մռավյան, Հոդվածներ և ճառեր (1913—1929), Երևան, 1961, էջ 121։

9 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 21, էջ 341։

10 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 34, էջ 2։

կոմիտեների միացյալ նիստը։ Քննարկվեց Պետրոգրադի իրադարձությունների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը։ Ընդունված էսէռամենշևիկյան բանաձևում ասվում էր. «Պետրոգրադի կայազորի փոքրամասնության ելույթը, որի նպատակն էր բռնի ուժով ամբողջ դեմոկրատիայի վզին փաթաթել իր կամքը, Ռուսաստանի հեղափոխական ուժերը կազմալուծող մի քայլ էր»[11]։ Բանաձևում, իհարկե, լիովին նենգափոխված էին «ամբողջ դեմոկրատիա» և «կայազորի փոքրամասնություն» հասկացությունները։ Անառարկելի իրողություն է այն, որ ժամանակավոր կառավարության և նրան պաշտպանող էսէռների ու մենշևիկների դեմ վճռական գործողությունների կողմնակից էր մայրաքաղաքի հարյուր հազարանոց կայազորի բացարձակ մեծամասնությունը։

Ռեակցիան, էսէռամենշևիկյան և սևհարյուրակային մամուլն ամբողջ մեղքը զցում էին բոլշևիկների վրա։ Նրանց մեղադրանքները հասնում էին անհեթեթության աստիճանի։ Այսպես, օրինակ, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության Անդրկովկասյան կոմիտեի օրգան «Զնամյա տրուդա» թերթը Պետրոգրադի հեղափոխական զինվորների արդարացի ելույթը բնութագրում էր որպես «ոչ սոցիալիստական բնույթի», «խուլիգանական», «անարխիստական» միջոցառում, որը բնորոշ է միայն «ամենամութ ռեակցիոն ուժերին»։ Նա բոլշևիկյան կուսակցության առաջնորդներին որակում էր որպես «գերմանական գործակալների» և հանդում այն եզրակացության, որ «ռուսական իրականությունը Փետրվարյան հեղափոխությունից հետո պահանջում է ոչ թե հեղափոխության զարգացում, այլ՝ ամրապնդում»[12]։

Բաքվի էսէռների «Աշխատանքի դրոշակ» հայերեն թերթը հուլիսյան ցույցից հետո երկրում հաստատված ռեակցիան բնութագրում էր որպես «հեղափոխական դիկտատուրա» և խորհուրդ էր տալիս ոչինչ չխնայել «ժամանակավոր կառավարությանն օգնելու՝ նրա սկսած մեծ փրկարար կռվում»[13]։ Ուշագրավ է, որ Կովկասյան բանակի երկրային սովետի նախագահ էսէռ Դ. Դոնսկոյը սովետի հուլիսի 10-ի նիստում, «անցանկալի» բանավեճերի առաջն առնելու և բոլշևիկներին ահաբեկելու մտադրությամբ, նիստի հենց սկզբում հրապարակում է Կերենսկու հրամանը՝ «բոլշևիկներին ձերբակալելու և բոլշևիկյան թերթերը փակելու» վերաբերյալ[14]։

Պետրոգրադի հուլիսյան իրադարձություններն Անդրկովկասի էսէռների և մյուս ռեակցիոն ուժերի համար դարձան հարմար առիթ՝ վերջապես հաշվեհարդար տեսնելու բանակում և աշխատավորների շրջանում իրենց դիրքերը և աղդեցությունն օր-օրի ամրապնդող բոլշևիկների հետ։ Էսէռները, որոնց դիրքերն ինքնակալության անկումից հետո Անդրկովկասում համեմատաբար ամուր էին, Փետրվարյան հեղափոխությունից մի քանի ամիս հետո զգալով, որ իրենց համաձայնողական քաղաքականությունը մատնված է կրախի և գնալով կորցնում են իրենց հենարանն Անդրկովկասի բնակչության մեջ, բոլշևիկների դեմ անցան ավելի ռեակցիոն միջոցառումների՝ պահպանելով, իհարկե, առերևույթ չեզոքություն։ Այսպիսով, Անդրկովկասի էսէռները ևս անցան հակահեղափոխության ճամբարը։ Մինչև հուլիսյան իրադարձությունները շարունակվում էին բոլշևիկ գործիչների դեռևս ապրիլից սկսված ձերբակալությունները։ Սակայն ժողովրդական մասսաներին գաղտնի էր մնում այն փաստը, որ շատ ռեակցիոն միջոցառումներ ղեկավարում են հենց իրենք՝ էսէռները։ Օրինակ, Թիֆլիսում հունիսի սկզբին բոլշևիկներ Էրաքյանի, Քալանթաձեի, Տարազյանի և Սոլավյանի ձերբակալության դործը ղեկա-

---

11 «Голос краевого совета солдатских депутатов кавказской армии», 9. VII. 1917.

12 «Знамя труда», 11, VII. 1917.

13 «Աշխատանքի դրոշակ», 16. VII. 1917։

14 ՍՄԿԿ կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի վրացական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 8, ց. 3, գ. 944, թ. 14։

վարում էր էսէռ Ռեբրուխը, որը Թիֆլիսի բանվորների և զինվորների դեպուտատների սովետի գործադիր կոմիտեի անդամ էր[15]։ Բաթումի էսէռները, հավատարիմ իրենց Թիֆլիսի կոլեգաների վարքագծին, հուլիսի սկզբներին արգելեցին Պետրոգրադից ուղարկված «Պրավդա» թերթի համարների առաքումը ռազմաճակատ[16]։

Իրականությունը ժողովրդին հասցնելու գործում անգնահատելի աշխատանք էին կատարում տեղի բոլշևիկյան կազմակերպությունները և, հատկապես, բոլշևիկյան մամուլի օրգանները՝ «Կավկազսկի ռաբոչին», «Բակինսկի ռաբոչին», «Բանվորի կռիվը», «Բրձոլան», «Սոցիալ-դեմոկրատը», «Հոմմեթը» և այլն։ Բնութագրելով Պետրոգրադի իրադարձությունները, «Կավկազսկի ռաբոչին» գրում էր. «սոցիալիստ հեղափոխականների անկայունությունը, համաձայնողականությունը և օպորտունիզմը մեկ անգամ ևս խանգարեցին դեմոկրատիային՝ գրավելու ամբողջ իշխանությունը։ Դրությունն այնպիսին էր, որ պետք էր կա՛մ վճռականորեն գրավել իշխանությունը, կա՛մ դեմ դնալ շարժմանը։ Սոցիալիստ-հեղափոխականներն ընտրեցին վերջինը։ Նրանք ձեռք մեկնեցին ճնշող գեներալ Պոլովցևին»[17]։

Հերքելով այն անհեթեթ լուրերը, որ տարածում էին Անդրկովկասի էսէռական թերթերը բոլշևիկների մասին, Ստ. Շահումյանը գրել է. «Բոլոր անհաջողությունների մեջ, բանակի ապրած ամբողջ խայտառակության մեջ նրանք մեղադրում են բոլշևիկներին։

Պատմությունը հազիվ թե գիտենա ավելի գրանգիոզ մի պրովոկացիա ընդդեմ հեղափոխական կուսակցության։ Ամբողջ խավար Ռուսաստանին, որը ջղաձգվում և ելք է փնտրում ծանր կրիզիսից, բոլոր քաղքենիներին և գյուղացիներին ուզում են գրգռել բոլշևիկների դեմ»[18]։ Բնութագրելով էսէռներին, Ստ. Շահումյանը նշել է, որ «Ռուսաստանում ոչ մի կուսակցություն չի տվել այնպիսի խոշոր պրովոկատորներ, ինչպես էսէռների կուսակցությունը։ Եվ, չնայած դրան, քաղաքականապես ազնիվ ոչ մի մարդ մտքովն անգամ չէր կարող անցկացնել, որ գյուղացիական շարժումը գյուղերում կամ մանրբուրժուական ինտելիգենցիայի աշխատանքը քաղաքներում պրովոկացիայի արդյունք է։ ...Էսէռների կուսակցությունը իշխող կուսակցություններից մեկն է այժմ։

Բայց քանի որ նա արդեն իշխող կուսակցություն է, ուստի բոլորն էլ մոռացել են, որ նրա միջավայրից են դուրս եկել հռչակավոր պրովոկատորները,— ազեֆները, բոգրովները, գապոները և այլն»[19]։

Իշխանության գլուխ անցած կուսակցությանը դժվար չէր իր մամուլի օրգաններից մեկում՝ աջ էսէռական «Դեն» թերթում, գտնել մի հոդված, որում ասվում էր. «Եթե մեր հեղափոխական պատմության մեջ չլինեին լենինյանները, նրանց կհնարեին։ Այլ կերպ, ինչպե՞ս պայքարել հեղափոխության դեմ»[20]։ «Հակահեղափոխական բուրժուազիան,— գրել է Ստ. Շահումյանը,— արտավորում է լենինյաններին, նրանց ցուցադրում է իբրև հեղափոխության դավաճաններ՝ հենց այդ հեղափոխության դեմ պայքարելու համար։ Բայց, արտահայտելով այդ միտքը, էսէռները երբեք չպետք է մոռանան այն»[21]։

Էսէռների դեմ բոլշևիկյան կուսակցությունը համառ պայքար էր մղում նաև Բաքվում՝ Անդրկովկասի այդ արդյունաբերական խոշոր կենտրոնում,

---

15 С. Е. Сеф, Революция 1917 года в Закавказье (документы, материалы), Тифлис, 1927, с. 23.

16 «Кавказский рабочий», 2. VII. 1917.

17 Նույն տեղում, 2. VIII. 1917։

18 Ստեփան Շահումյան, երկ, հ. 3, էջ 153։

19 Նույն տեղում, էջ 138—139։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում։

որտեղ էսէռների ազդեցությունը հատկապես մեծ էր։ Եվ քանի որ դա այդպես էր, անհրաժեշտ էր ավելի եռանդուն գործել, որպեսզի էսէռների պրոպագանդայից խաբված աշխատավորները ճիշտ ըմբռնեին իրերի դրությունը և ճանաչեին նրանց իսկական դեմքը։ Այդ ուղղությամբ բոլշևիկների աշխատանքը գլխավորում էին Ստ. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Աղիզբեկովը և ուրիշներ։ Բոլշևիկների աճող հեղինակության մասին էր խոսում այն փաստը, որ երբ Բաքվում 1917 թ. հուլիսի 9-ին զինվորական ակումբում պետրոգրադյան իրադարձությունների կապակցությամբ կայացած ժողովում Ս. Շահումյանից հետո փորձեց ելույթ ունենալ էսէռ Ռ. Բեկզադյանը, ներկաները նրան թույլ չտվեցին խոսել և մենշևիկ Սադովսկու հետ միասին հեռացրին դահլիճից[22]։ Հուլիսի 16-ին «Սոցիալ-դեմոկրատ» թերթում տպագրված հոդվածում բնութագրելով հեղափոխության նոր փուլում էսէռների և մյուս համաձայնողականների վարքագիծը, Ստ. Շահումյանը գրել է. «Արդեն ամբողջ մանրբուրժուական դեմոկրատիան—մենշևիկների և էսէռների ղեկավարությամբ,— որ առաջ տատանվում էր բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև և հեղափոխության սկզբի օրերին ավելի մոտ էր վերջինիս,— այժմ բացարձակապես անցել է հակահեղափոխական բուրժուազիայի կողմը և նրա հետ միացած բացարձակ կռիվ սկսել հեղափոխական պրոլետարիատի և նրա կուսակցության դեմ»[23]։

Էսէռներին մերկացնող քննադատությամբ հանդես էր դալիս նաև Թիֆլիսի բոլշևիկների օրգան «Բանվորի կռիվը»։ «Բանվորության համար ոչ մի թշնամի,— գրում էր թերթը,— այնքան վտանգավոր չէ, որքան մանր բուրժուազիան։ Այս հեղափոխության ընթացքում նա անուղղելի և սոսկալի հարվածներ հասցրեց հեղափոխական պրոլետարիատին։ Մանր բուրժուական մասսաները իրենք իրենց անվանում են «դեմոկրատիա»։ Այդ չարաբաստիկ դեմոկրատիայի անունից խոսում են և գործում էսէռներն ու մենշևիկները»[24]։

Հուլիսյան իրադարձությունները ցնցեցին նաև Ալեքսանդրապոլը։ Քաղաքի կայազորի զինվորների պահանջով հուլիսի 9-ին կայացավ հսկայական ցույց և միտինգ, որոնց ղեկավարությունն իրենց ձեռքն էին վերցրել բոլշևիկները[25]։ Դատելով լոզունգների բովանդակությունից և բոլշևիկների տակտիկայից, այն հետևությունը կարելի է անել, որ Ալեքսանդրապոլի կայազորի հուլիսի 9-ի մասսայական ցույցն ու միտինգը Պետրոգրադի և Թիֆլիսի հունիսյան նշանավոր ցույցերի ուղղակի արձագանքն էին[26]։ Ցույցի գլխավոր լոզունգը նոր հարձակման, պատերազմի մերժումն էր։ Սխալ էր, իհարկե, երբ ցուցարարները հեղափոխության հին, խաղաղ փուլին համապատասխան պահանջում էին ամբողջ իշխանությունը հանձնել սովետներին[27]։ Միտինգի ժամանակ ճառերով հանդես եկան բոլշևիկների, էսէռների և մենշևիկների ներկայացուցիչները։ Բոլշևիկներից հանդես եկան Գ. Հայկունին, Բ. Ղարիբջանյանը և Պ. Արվելաձեն, որը միտինգի նախագահն էր։ Ալեքսանդրապոլի սովետի «Ռաբոչի ի սոլդատ» թերթում նշվում էր, որ էսէռ Տեր-Գասպարովի և մենշևիկ Բարսամովի ճառերը ավելի փոքր համակրանքով լսվեցին, քան բոլշևիկ հռետորներինը, որոնց ճառերն ավարտվում էին բացականչություններով և ծափահարություններով։ Միտինգի ավարտվելուց հետո ընդունվեց բոլշևիկ Շապովալենկոյի առաջադրած բանաձևը[28], որը Պետրոգրադի բանվորների ու զինվորների հուլիսյան հզոր ցույցը համարում էր «արդարացի

---

22 «Победа советской власти в Закавказье», Тбилиси, 1971, с. 117.

23 *Ստեփան Շահումյան, Երկ, հ. 3, էջ 166։*

24 *«Բանվորի կռիվը», 23. VII. 1917։*

25 «Рабочий и солдат», 14. VII. 1917.

26 «Революционное движение в русской армии в 1917 году», М., 1981, с. 128

27 «Рабочий и солдат», 14. VII. 1917.

28 *Նույն տեղում։*

և անհրաժեշտ բողոք կոալիցիոն մինիստրության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության դեմ» և ավելացնում էր. «Ալեքսանդրապոլի կայազորի զինվորներս ու բանվորներս ամբողջովին միանում ենք Պետրոգրադի ընկերներին, հեղափոխական բանակին, հեղափոխական պրոլետարիատին և պահանջում ենք, որ ամբողջ իշխանությունն անհապաղ հանձնվի բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների համառուսաստանյան սովետին»[29]։

«Ռաբոչի ի սոլդատ» թերթում Պ. Արվելաձեի ստորագրությամբ հիշյալ բանաձևի հրապարակումը և միտինգի վերաբերյալ հաղորդագրությունը լուրջ հարված էր էսէռներին և մյուս համաձայնողականներին։ Բայց ռեակցիայի ակտիվացման պայմաններում բոլշևիկների հալածանքն Ալեքսանդրապոլում ևս ուժեղացավ։ Պ. Արվելաձեն ազատվեց «Ռաբոչի ի սոլդատ» թերթի խմբագրի պարտականություններից։ Հաջորդ համարից թերթը վերածվեց էսէռների և մյուս համաձայնողականների իսկական պաշտպանի։ Այն հեղեղվեց այնպիսի նյութերով, որոնցում հավանություն էր տրվում Պետրոգրադի զինվորների խաղաղ ցույցը գնդակոծողների և հակահեղափոխական ուժերի միասնական բլոկի գործողություններին։ Սակայն թերթում տպագրվող նման հոդվածները չէին կարող կանգնեցնել բոլշևիկների հեղինակության անը։

Քննվող ժամանակաշրջանում Երևանի հասարակական-քաղաքական կյանքի օբյեկտիվ պատկերին ծանոթանալուն խանգարում է այն հանգամանքը, որ քաղաքում բոլշևիկների համեմատաբար թույլ լինելու պատճառով բացակայում էր բոլշևիկյան մամուլը։ Այդ իսկ պատճառով քաղաքի հասարակական-քաղաքական կյանքի մասին հիմնական տեղեկությունները ստանում ենք էսէռամենշևիկյան համաձայնողական սովետի օրգան «Ստրաժ սվոբոդի» թերթի մանրաղնին ուսումնասիրությունից, թերթ, որն իրականում էսէռների օրգանն էր։ Այնտեղ տպագրված հաղորդագրություններից տեղեկանում ենք, որ օգոստոսի 10-ին Երևանում տեղի է ունեցել սպեկուլյացիայից ու թանկությունից դժգոհ զինվորների ելույթ։ Դեպքերն ավելի սուր բնույթ են ընդունում, երբ զինվորներին հայտնի է դառնում, որ սպայական ժողովում մի քանի ռեակցիոն սպաներ վիրավորել են զինվորների համակրանքը. վայելող սպա բոլշևիկ Թոփուրիձեին։ Այդ միջադեպը քննարկվում է կայազորի զինվորական պատգամավորների սովետի՝ օգոստոսի 13-ի արտակարգ նիստում[30]։ Նրանում առաջինը հանդես է գալիս հրամանատարության ներկայացուցիչ փոխգնդապետ Պուչկովսկին։ Նա աջից դատապարտում է «գործադիր օրգաններին», որոնք ի վիճակի չէին կանխելու հեղափոխական շարժումը կայազորում։ Նրանից հետո հանդես եկած Թոփուրիձեն մերկացնում է Պետրոգրադի, Մոսկվայի, Երևանի և այլ համաձայնողական սովետների գործադիր կոմիտեներին, էսէռներին ու նրանց համախոհներին, նշելով, որ նրանք իրենց գործունեությամբ ուղի հարթեցին հակահեղափոխության հաղթանակի համար։ Այնուհետև ելույթ է ունենում սովետի նախագահ էսէռ Երմոլաևը, որի ճառն ամբոխավարության անսքող օրինակ կարող է ծառայել։ Նա վերհիշում է մարտյան օրերին սպաների ու զինվորների «միասնությունը կարմիր դրոշի ներքո» և կոչ է անում վերադառնալ այդ «երանելի» ժամանակներին։ Նույն ոգով էր տոգորված նաև էսէռ Կիտաևի ճառը, որը հանդես է գալիս «ընթացիկ մոմենտի մասին»։ Խոսելով պատերազմը շարունակելու անհրաժեշտության մասին, Կիտաևն օգտագործում է էսէռներին հատուկ խաբեության բոլոր նրբերանգներն ու խորամանկությունները, որպեսզի նվաճի ներկաների համակրանքը։ Նրա ճառը զարդարում էին ժամանակի ոգուն համապատասխան և կարծես մեկ այլ կուսակցության լոզունգներից փոխառնված «ազատություն», «դեմոկրատիա», «հաշտություն առանց անեքսիաների և

29 Նույն տեղում։

30 «Страж свободы», 17. VIII. 1917.

կոնտրիբուցիայի» արտահայտությունները։ Բանակի փրկության միակ ուղին Կիտաևը տեսնում էր կարգապահության բարձրացման մեջ և կոչ էր անում ենթարկվել գեներալ Կոռնիլովի հրամանին, այսինքն՝ բանակում հաստատել խստագույն կարգապահություն, որը, ըստ էության, չէր տարբերվելու ցարական ժամանակների ռազմական մուշտրայից։ Կիտաևը, նկատի ունենալով բոլշևիկներին, նաև նշում էր, որ «մութ ուժերը» ցանկանում են հետաձգել Սահմանադիր ժողովի հրավիրումը։ «Եվ եթե մեր ժամանակավոր կառավարությունը,— շտրունակում էր նա,— հետաձգի նրա հրավիրումը, ապա մենք պետք է հասկանանք, որ այդ որոշումը ընդունված է, ելնելով ամենածայրահեղ անհրաժեշտությունից»[31]։ Սովետի նախագահ Երմոլաևը լրացնելով Կիտաևին, հայտարարում էր, որ «մեր առջև արտաքին թշնամին է, իսկ հետևվում՝ ներքին. հեղափոխությունը վտանգի մեջ է։ ...Մենք պետք է խիտ շարքերով ետ մղենք ներքին թշնամուն (բոլշևիզմը—Ս. Մ.)։ Մենք այդ կանենք միայն այն ժամանակ, երբ հանգես գանք ուղիղ, կազմակերպված շարքերով»[32]։ Պետրոգրադի հուլիսյան խաղաղ ցույցի գնդակոծումից հետո էսէռները և մյուս համաձայնողականներն իրենց զգում էին ժամանակի տիրակալներ և արդեն բացահայտում էին իրենց իսկական նպատակները, որոնք, ըստ էության, այլևս չէին տարբերվում կադետների ու բանակի ռեակցիոն հրամանատարության նպատակներից։ Ի վերջո, նիստում ընդունվում է հետևյալ բանաձևը. «Լսելով և քննարկելով գեներալ Կոռնիլովի հրամանի և ընթացիկ մոմենտի մասին զեկուցումները, Երևանի կայազորի զինվորների պատգամավորների սովետը որոշում է. ողջունել գեներալ Կոռնիլովի հրամանը և ձեռնարկել բոլոր միջոցները այն կյանքում իրագործելու ուղղությամբ։ Ընթացիկ մոմենտի իրադարձությունները մեզնից պահանջում են Սովետների շուրջը համախմբել դեմոկրատիայի ամբողջ ուժերը՝ երկրի մութ ուժերին (բոլշևիկներին—Ս. Մ.) դիմագրավելու համար»[33]։

Անդրկովկասում էսէռների ետհուլիսյան քաղաքականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք նախորդ ժամանակաշրջանի իրենց համաձայնողական քաղաքականությամբ քայլ առ քայլ երկիրը կանգնեցրին կոռնիլովյան միապետական դավադրության առջև։

Մանրբուրժուականության էվոլյուցիան և սարսափը սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հեռանկարից հանգեցրին նրան, որ ընդարձակ երկրի հեղափոխական կարևորագույն օջախներից մեկում՝ Անդրկովկասում ևս, էսէռները համաձայնողականությունից անցում կատարեցին դեպի բացահայտ հակահեղափոխություն։ Պայքարելով էսէռների դեմ, երկրամասի բոլշևիկներն օգնում էին աշխատավորներին՝ տարբերելու նրանց խոսքն ու գործը և ընտրելու պայքարի ճշմարիտ ու վճռական ուղի։

БОРЬБА БОЛЬШЕВИКОВ ЗАКАВКАЗЬЯ ПРОТИВ ЭСЕРОВ В ПОСЛЕИЮЛЬСКИЙ ПЕРИОД 1917 г.

САСУНИК МЕЛИКЯН

Резюме

Первые эсеровские организации в Закавказье появились в 1903—1905 гг. в Баку, Тифлисе, Ереване и других городах края. По сравнению

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում։

с организациями центральных районов России закавказские организации эсеров были еще очень слабыми и в период столыпинской реакции и первой мировой войны были разгромлены. «Второе рождение» партии эсеров в Закавказье относится к периоду после Февральской революции 1917 года.

Изучение политики эсеров в Закавказье после июльских событий 1917 г. приводит к заключению, что соглашательская политика этой мелкобуржуазной партии, совместно с меньшевистской и другими подобными партиями, поставила революцию перед опасностью корниловского мятежа. Мелкобуржуазный революционаризм, страх перед победой социалистической революции привели к тому, что в Закавказье также, как и во всей стране, эсеры перешли от соглашательства к явной контрреволюции.